ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ԾՐԱԳԻՐ - 2010

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը՝ այսուհետև «Կողմեր»,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության միջև գիտատեխնիկական ոլորտում համագործակցության մասին» 2009 թ. նոյեմբերի 15-ին կնքված պայմանագրի 1-ին մասի «բ» ենթակետը,

կնքեցին Սույն Ծրագիրը ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Նախաբան

Համաձայն Սույն Ծրագրի Կողմերը պայմանավորվում են կազմակերպել կենսաբանության, քիմիայի և էկոլոգիայի բնագավառներում գիտական թեմաների մրցույթ: Մրցույթը եւ գիտական թեմաների հայտերի փորձաքննությունը կազմակերպվում է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից: Փորձաքննության արդյունքում երաշխավորված թեմաները ֆինանսավորվում են ըստ Սույն Ծրագրի Հոդված 4-ի Կողմերի ստանձնած պարտավորությունների:

Հոդված 2

Մրցույթի անցկացման պայմանները

Սույն Ծրագրի շրջանակներում ֆինանսական աջակցության են արժանանում ԼՂՀ կրթության եւ գիտության նախարարության կողմից ներկայացված այն գիտական թեմաների հայտերը, որոնք ունեն տվյալ թեմայի գիտական ուղղությամբ ՀՀ բուհերից կամ գիտական կազմակերպություններից ընտրված գիտական խորհրդատու:

Սույն Ծրագրի շրջանակներում անցկացվող գիտական թեմաների մրցույթի անցկացման համար անհրաժեշտ պայմաններն ու ձեւաթղթերը հաստատվում են մրցույթի անցկացման Հրավերի տեքստով, որը ներկայացված է Սույն Ծրագրի Հավելված 1-ում, որը կազմում է սույն Ծրագրի անբաժանելի մասը:

Հոդված 3

Դրամաշնորհների բաշխման ընթացքի համակարգումը

Մրցույթի արդյունքում հատկացվող ֆինանսական միջոցների բաշխման ընթացիկ ֆինանսական համակարգումը դրվում է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի եւ ԼՂՀ կրթության եւ գիտության նախարարության կողմից երաշխավորված՝ յուրաքանչյուր Կողմից երկուական ներկայացուցչից բաղկացած համակարգող խորհրդի վրա, որին տրվում է համապատասխան լիազորություններ:

Հոդված 4

Ֆինանսական միջոցների ծավալները եւ Կողմերի պարտավորությունները

Սույն Ծրագրի շրջանակներում անցկացվող մրցույթի արդյունքում ֆինանսական աջակցություն կստանան 5 (հինգ) համատեղ գիտական թեմաներ՝ որոնց ընդհանուր բյուջեն կազմում է 20 (քսան) միլիոն ՀՀ դրամ, ընդ որում՝

- ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն համատեղ գործունեության նպատակով իր բյուջետային միջոցներից յուրաքաչյուր թեմայի համար կատարում է ներդրում՝ նախատեսված ընդհանուր գումարի 90 տոկոսի չափով, որը կազմում է 18 (տասնութ) միլիոն ՀՀ դրամ:

- ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունը համատեղ գործունեության նպատակով իր բյուջետային միջոցներից կատարում է տարեկան ներդրում՝ նախատեսված ընդհանուր գումարի 10 տոկոսի չափով, որը կազմում է 2 (երկու) միլիոն ՀՀ դրամ:

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից տրամադրված միջոցներն ուղղվում են ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների մասնակիցների աշխատանքի վարձավճարների, գործողումների, սարքավորումների համար անհրաժեշտ ծախսերը հոգալու համար:

ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից տրամադրված միջոցները ուղղվում են գիտական թեմաների կատարման համար պահանջվող վերադիր ու գիտական թեմայի իրականացման համար այլ ծախսերը հոգալու համար:

Սույն Ծրագրի շրջանակներում Կողմերի ներդրած ֆինանսական միջոցներն օգտագործվում են բացառապես վերը նշված նպատակներով եւ չեն կարող օգտագործվել վարչասպասարկման ծախսերի փոխհատուցման համար:

Կողմերի ստանձնած ֆինանսական պարտավորությունների ծավալային հարաբերակցությունը անփոփոխ է:

Անհրաժեշտության դեպքում Կողմերն իրավասու են քննարկել լրացուցիչ ներդրումներ կատարելու մասին հարցը: Լրացուցիչ ֆինանսավորում հատկացնելու մասին որոշումներն ամրագրվում են Կողմերի գրավոր համաձայնությամբ:

Գիտական թեմաների իրականացման անհրաժեշտությունից ելնելով՝ Սույն Ծրագիրը բաց է երրորդ կողմից ֆինանսական ներդրումներ ընդգրկելու համար:

Հոդված 4

Ֆինանսական միջոցների բաշխման կարգը

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն յուրաքանչյուր ամիս տվյալ թեմայի իրականացման համար իր կողմից նախատեսված գումարը փոխանցում է ԼՂՀ՝ խմբի ղեկավարի ներկայացրած համապատասխան բուհ կամ գիտական կազմակերպություն:

Գիտական խորհրդատուի համար հատկացվող գումարը փոխանցվում է ՀՀ համապատասխան բուհ կամ գիտական կազմակերպություն:

ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունն իր մասնաբաժինը փոխանցում է գիտական կազմակերպություն, որտեղ աշխատում են գիտական թեմայի մասնակիցները:

Հոդված 5

Անհաղթահարելի ուժի ազդեցությունը

Սույն Ծրագրով պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Ծրագիրը կնքելուց հետո և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներից են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրությունը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Ծրագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Սույն Ծրագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

Հոդված 6

Եզրափակիչ դրույթներ

Սույն Ծրագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից եւ գործում է համատեղ ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ժամկետի ավարտից հետո ևս վեց ամիս՝ թեմաների ամփոփիչ հաշվետվությունների փորձաքննության անցկացման ու համագործակցության արդյունքների մասին Կողմերի միջեւ համապատասխան եզրակացություններ փոխանակելու նպատակով:

Կողմերն իրավասու են երկարաձգել Սույն Ծրագրի գործողության ժամկետը կամ կարող են պայմանավորվել Սույն Ծրագիրը նոր նախաձեռնություններով համալրելու մասին:

Սույն Ծրագրի դրույթների մեկնաբանման կամ դրա գործողության ընթացքում ծագած տարաձայնությունները լուծվում են բանակցությունների ու խորհրդատվությունների միջոցով:

Կատարված 2010 թվականի ---Հոկտեմբերի--- «29» - ին, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող հայերեն լեզվով շարադրված երկու (2) բնօրինակից՝ յուրաքանչուր Կողմին մեկական օրինակով:

Կողմերի իրավաբանական հասցեները եւ ստորագրությունները

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե	ԼՂՀ կրթության և գիտության նախարարություն
ք. Երևան, Օրբելի եղբայրների փողոց 22	ք. Ստեփանակերտ, Թումանյան փողոց 62
Նախագահ՝ Ս. Հարությունյան	Նախարար՝ Վ. Խաչատրյան
---	---
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ. Տ.	Կ. Տ.